Գիտություն

ՄԱՅԻՍ
№ 5
(353)
2021 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ Է

Համո ՍԱՀՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Մենք գիտենք մարտնչել կյանքում,
Մենք գիտենք հառաչել ու լալ,
Ծովի պես շառաչել գիտենք
Եվ կանչել առվի պես զուլալ,
Ամպի պես գիտենք որոտալ,
Սոսափել սոսու պես մի պերճ,
Հողմի պես ոլորել գիտենք,
Հովի պես օրորել անվերջ։
Մենք գիտենք ամենից ահեղ
Հեղեղի հորձանքում լողալ,
Ցասման գոռ փոթորկից պայթել
Եվ սիրո քնքշանքից դողալ։
Մենք գիտենք մխրճվել երկինք
Եվ ծովի հատակը սուզվել,
Մի ծաղկի մահով վշտանալ,
Մի բացվող բողբոջով հուզվել։
Ինչ էլ որ պատահի կյանքում,
Ամենուր զորանալ գիտենք,
Երազով տաքանալ ցրտում,
Հրդեհում՝ զովանալ գիտենք։
Մենք գիտենք հաց քամել հողից
Եվ բախտի լույս գտնել հանքում,
Եվ գիտենք, որ կյանքի համար
Մենք քեզ ենք պարտական կյանքում։
Մենք քեզնով ներշնչվել գիտենք
Եվ գիտենք քեզ համար մեռնել
Եվ անգամ վիրավոր ձեռքով
Հաղթության դրոշակ բռնել։

ՀՀ ԳԱԱ 2020թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության հաշվետվություն

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

Արդեն երկրորդ տարին է, որ տարեկան ընդհանուր ժողովն անց է կացվում ոչ ավանդական ձևաչափով: Բաժանմունքների ընդհանուր ժողովներում մանրամասն քննարկվել է ԳԱԱ 2020թ. գործունեությունը, ընդունվել են որոշումներ, որոնք ամփոփել է ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարը:

Համառոտ ներկայացնեմ մեր գործունեության հաշվետվությունը, դրույթներն ու խնդիրները:

2020թ. ամենադժվար տարին էր ակադեմիայի պատմության մեջ: Պատճառները երկուսն էին՝ համավարակը և Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմը: Այս երկու արհավիրքները, իհարկե, խախտեցին մեր բնականոն գործունեությունը: Խնդիրը՝ համավարակի պայմաններում ինչպես կազմակերպել ակադեմիական հաստատությունների աշխատանքը, նոր գործելաոճ թելադրեց: Բազմաթիվ նոր դժվարություններ ի հայտ եկան, բայց մեր գիտական բոլոր կառույցները ձգտում էին իրենց հետազոտական աշխատանքներով նպաստել համավարակի դեմ տարվող պայքարին: Բաժանմունքների կառույցները ներկայացրեցին մոտ 46 առաջարկ: Կառավարության առաջադրանքով և ֆինանսական աջակցությամբ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը պատրաստեց և ՀՀ առողջապահության նախարարությանը տրամադրեց 100.000 ախտորոշիչ թեստ: Ֆիզիկական քիմիայի ինստիտուտի արտադրած ,Բիոքսիե ախտահանիչ նյութը կիրառվեց տարբեր բնագավառներում, կազմակերպվեցին ախտահարման աշխատանքներ նաև համակարգի բոլոր կազմակերպություններում: Սա թերևս նպաստեց, որ մեր համակարգում վարակվածների թիվը մեծ չի: Առաջարկություններ են ներկայացրել նաև ֆիզիկական հետազոտությունների, ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտները: Բոլոր բաժանմունքները պետք է համավարակի հետ կապված խնդիրները ներառեն իրենց հետագա ծրագրերում:

44-օրվա պատերազմն արհավիրք էր, որի հետևանքներին առնչվում ենք արդեն 6 ամիս, ամեն օր: Իշխանությունները ոչ ստույգ բացատրություններ են տալիս, ոչ էլ բավարար քայլեր են ձեռնարկում, և բնական է, որ ակադեմիան առաջիններից էր, որ պահանջեց կառավարության հրաժարականը:

Խնդրահարույց կարելի է համարել նաև ,Կրթության և գիտության մասինե չարաբաստիկ օրենքի ընդունումը, որից բխող վնասները համեմատելի են միայն համավարակի հետևանքների հետ: Օրենքի աշխատանքային տարբերակը ստացել էինք դեռ 2018թ.: Այդ տարբերակում ակադեմիան վերածվել էր կարգավիճակ չունեցող սովորական հասարակական կազմակերպության, դրվել էր ակադեմիան վերացնելու աշխատանքի սկիզբը: Ակադեմիան բազմիցս արտահայտել է իր կարծիքն այդ օրենքի վերաբերյալ, գիտության ասպարեզում օրենքի ընդունման համար ոչ մի հիմնավորում չկա: Եթե խոսքը բարեփոխումների մասին է, ապա ակադեմիան բազմիցս նշել է գիտությանը վերաբերող գործող օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին: Իսկ նոր օրենքով լուծարվում է մի համակարգ, որը ստեղծվել և հաջողությամբ գործել է տարիներ շարունակ: Համալսարանի իրավագետների հետ համագործակցելով՝ ակադեմիան արդյունավետ աշխատանք է կատարել: Մենք հետևողական ենք եղել մեր բոլոր առաջարկներում, և արդյունքում՝ դրանք արժանացել են հանրապետության նախագահի ուշադրությանը, նրան էլ ներկայացրել ենք մեր՝ օրենքի փոփոխության վերաբերյալ պահանջները: Օրենքի հեղինակների ցանկությունը, նպատակը համակարգի ինստիտուտները նախագահությունից անջատելն է: Եղել են բազմաթիվ հանդիպումներ, հրավիրել ենք ժողովներ նախկին և ներկա նախարարների հետ, ակադեմիայի անդամները, ինստիտուտների տնօրեններն իրենց բազմաթիվ ելույթներում, հարցազրույցներում պահանջել են չքանդել համակարգը, թողնել, որ ակադեմիան շարունակի իր կարգավորող, համակարգող գործառույթներն իր ինստիտուտների նկատմամբ: Օրենքի ընդունումից հետո սկսել ենք ակադեմիայի նոր կանոնադրության ստեղծման աշխատանքները: Օրենքի քննարկման ավելի քան մեկ տարվա ժամանակահատվածը ցույց տվեց համակարգի կազմակերպությունների միասնությունը, համախմբվածությունը: Ակադեմիայի գոյության, հեռանկարների վերաբերյալ համակարգի կազմակերպություններում երկու անգամ կազմակերպված հարցադրմանը տրվել է միասնական պատասխան: Այս երեք դժվար խնդիրները, անշուշտ, ազդել են ակադեմիայի ընթացիկ տարվա գործունեության, գիտական արդյունքների վրա:

Հիմնական ծրագրերը, որոնք կապված են հիմնարար և կիրառական հետազոտությունների հետ, առավելապես կատարվել են: Կատարվել են 5 նպատակային, 42 բազային, 152 թեմատիկ և 105 տնտեսական պայմանագրային ծրագրեր: Ստացված արդյունքներով հրապարակվել են 140 մենագրություն և ժողովածու (11-ն արտասահմանում), 15 ուսումնական ձեռնարկ և դասագիրք (2-ն արտասահմանում), 1893 հոդված (839-ն արատասահմանում), 155 թեզիս (92-ն արտասահմանում): Կարևորվում է բարձր հեղինակություն ունեցող արտասահմանյան ամսագրերում հոդվածների տպագրությունը, առավել ևս, որ նման հոդվածների տպագրումը գիտնականի, կազմակերպության գնահատման չափանիշներից է դարձել: Վերադաս մարմիններն առաջնորդվում են հենց այս չափանիշով. իհարկե, այն կարող է դերակատարում ունենալ, քանի որ ցույց է տալիս ստացված գիտական արդյունքի մակարդակը, սակայն անթույլատրելի է դա դարձնել աշխատանքի գնահատման միակ չափորոշիչը: Ակադեմիան ինստիտուտների գործունեության գնահատման չափորոշիչների մշակման ուղղությամբ բավականին ծավալուն աշխատանք է կատարել, մի ամբողջ տարի զբաղվել ենք այդ խնդրով, տպագրել ենք որոշ արդյունքներ: Ռուսաստանը նույնպես կատարել է նման աշխատանք, բաժանել է կազմակերպությունները 3 կատեգորիաների, սակայն այդ բաժանումը դեռ չի կիրառվում տարբեր խնդիրների պատճառով:

Բարձր հեղինակություն վայելող հայտնի ամսագրերում տպագրությունների քանակը պակասել է նախորդ տարիների համեմատ: Գիտնականները ձգտում են անպայման արտասահմանում հոդվածներ տպագրել, սակայն ավելի լավ է տպագրել 1 հոդված լավ ամսագրում, քան երեքը՝ երկրորդականներում:

Կատարված կիրառական աշխատանքների արդյունքը բավարար է, սակայն քիչ է արտոնագրերի քանակը. գիտական արդյունքների հետագա օգտագործումն արտադրության մեջ պահանջում է այդ արդյունքների արտոնագրում: Օրինակ՝ Ֆիզիկական քիմիայի ինստիտուտը կատարել է 180 միլիոն դրամ ծավալով կիրառական աշխատանքներ, Օրգանական և դեղագործական քիմիայի կենտրոնը՝ 136, ՌՖՔԻ-ը՝ 101, Բյուրականի աստղադիտարանը՝ 97, հնագիտության և ազգագրության ինստիտուտը՝ 97: Աշխատանքների մի մասը ֆինանսավորվել է պաշտպանության նախարարության կողմից, որոշ դեպքերում կազմակերպվել է փոքր ծավա-

➤3

ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը շնորհավորել է ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանին 85-ամյա հոբելյանի առթիվ

Մայիսի 1-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի ծննդյան 85-ամյա հոբելյանի առթիվ շնորհավորական ուղերձ է հղել ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը: Ուղերձում նշված է.

«Հարգելի պարոն Մարտիրոսյան,

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ ծննդյան 85-րդ տարեդարձի կապակցությամբ:

Ձեր գիտական վաստակով և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի պաշտոնում երկարամյա գործունեությամբ Դուք մեծ ներդրում ունեք հայրենական գիտության զարգացման, ինչպես նաև մեր երկրում կրթության և գիտության կազմակերպման կարևորագույն գործում:

Կրկին շնորհավորում եմ Ձեզ նշանակալի հոբելյանի առթիվ, մաղթում քաջառողջություն, ուժ, կորով՝ շարունակելու Ձեր հայրենանվեր գործունեությունը:

Հարգանքով՝

Արմեն ՍԱՐԳՍՅԱՆ»:

Ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանը, գիտությանն իրեն բնորոշ նվիրվածությամբ, բարդ խնդիրների լուծման ճանապարհների ընտրության պատասխանատվությամբ էապես նպաստել է համակարգի արդի գիտական հաջողություններին:

Ռադիկ Մարտիրոսյանն ավելի քան 200 գիտական աշխատության, Շվեդիայում և ԱՄՆ-ում հրատարակված 2 մենագրության հեղինակ է: Հայրենական բարձրագույն կրթությանն ու գիտությանը մատուցած անուրանալի ծառայությունների, հասարակական ակտիվ գործունեության համար ակադեմիկոսն արժանացել է բազմաթիվ մրցանակների, մեդալների ու շքանշանների, պատվոգրերի ու շնորհակալագրերի, գիտակազմակերպական ու մանկավարժական գործունեության համար արժանացել է Խորհրդային Միության, Հայաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի կառավարությունների բարձր պարգևների: Նա պարգևատրվել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց», «Հոկտեմբերյան հեղափոխություն», «Պատվո նշան» շքանշաններով:

Առանձնահատուկ հարկ ենք համարում անդրադառնալ ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանի վերջին երկու տարվա գործունեությանը:

Ինչպես հայտնի է, 2020 թ. Հայաստանի Հանրապետությունը կանգնեց ծայրահեղ ծանր երկու իրավիճակի դեմ հանդիման՝ COVID-19 համավարակը և Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմը: Բնականաբար, խաթարվեց նաև ՀՀ ԳԱԱ համակարգի բնականոն գործունեությունը: Սակայն ի պատիվ ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական և գիտահետազոտական կազմակերպությունների, ՀՀ ԳԱԱ նախագահության աշխատակազմի և մասնավորապես նախագահ Ռ. Մարտիրոսյանի լայնախոհ և հավասարակշռված քայլերի՝ պահպանվեց պատշաճ մակարդակի գիտական արդյունք ստանալու ավանդույթը, կատարվեցին հիմնարար և կիրառական տարաբնույթ գիտական հետազոտություններ: Համավարակի տարածման և նրա ազդեցության կանխարգելման 46 ծրագիր ներկայացվեց ՀՀ կառավարություն, դրանցից մի քանիսը կյանքի կոչվեցին: Առանձնահատուկ էր ուշադրությունը ԳԱԱ համակարգի գիտնականների անմիջական մասնակցությանը հանրապետության ռազմաարդյունաբերության համակարգի տարբեր օղակների աշխատանքներին: 44-օրյա պատերազմի ընթացքում ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանն անձամբ ու բազմիցս կոչերով դիմել է աշխարհի հայտնի գիտական կենտրոններին, անհատ գիտնականներին, ԳԱԱ արտասահմանյան անդամներին՝ դատապարտել թուրք-ադրբեջանական հայատյաց ագրեսիան: Եղել են դիմում-կոչեր, գրվել են աջակցություն հայցող նամակներ:

Ամփոփելով նրա գործունեությունը՝ զարմանում ես՝ որքան բեղմնավոր ու բազմաբնույթ է եղել Ռադիկ Մարտիրոսյանի գործունեությունը ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնում՝ նոր շենքերի կառուցում, ակադեմիական շենքերի փրկում օտարումից, ջեռուցման հարցերի կարգավորում, ամենամեծ աստղադիտակի նորոգում, երիտասարդ գիտնականների բնակարանային պայմանների բարելավում, տեխնիկական միջոցներով լաբորատորիաների վերազինում, Աղվերանի հանգստյան տան լիարժեք վերանորոգում, արձակուրդների օրերի և գիտական կոչումների համար հավելավճարների ավելացում, երիտասարդ մասնագետների պատրաստման որակի բարձրացում, միջազգային համագործակցության ընդլայնում, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամների ինստիտուտի կայացում և բազում-բազում գործեր, որոնք ծրագրել և իրականացրել է ՀՀ ԳԱԱ նախագահը, քանի որ պատվախնդիր է, քանի որ հաստատակամ է, նպատակասլաց, մարդ, որի ողջ գիտակցական կյանքը եղել է նվիրում գիտության առաջընթացին, նրա միջազգային հեղինակության բարձրացմանը:

Հանրապետության գիտական հանրությունը և բոլոր մտավորականները սրտանց շնորհավորում են Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանին, մաղթում առողջություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

(ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ 85-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

2021 թ. մայիսի 1-ին լրացավ ՀՀ ԳԱԱ նախագահ, քվանտային էլեկտրոնիկայի, ռադիոֆիզիկայի և ռադիոաստղագիտության բնագավառի վաստակաշատ գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի և Ուկրաինայի պետական մրցանակների դափնեկիր Ռադիկ Մարտիրոսյանի ծննդյան 85-ամյակը:

Ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը մեծ ավանդ ունի մեր երկրի գիտության և կրթության զարգացման գործում: Ծանրակշիռ այդ վաստակը նա ձեռք է բերել ավելի քան կեսդարյա բեղմնավոր ու պատասխանատու աշխատանքներում՝ ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի փոխտնօրենի, ավելի քան քառորդ դար՝ տնօրենի, մայր բուհի ռեկտորի, ազգային ակադեմիայի նախագահի պաշտոններում՝ ամենուրեք դրսևորելով անմնացորդ նվիրում, բարձր պատասխանատվություն և հաստատակամություն: Ակադեմիկոս Ռ.-Մարտիրոսյանը Ռուսաստանի դաշնության, Բելոռուսի և Վրաստանի գիտությունների ակադեմիաների արտասահմանյան անդամ է:

Ռ. Մարտիրոսյանը ծնվել է 1936 թ. մայիսի 1-ին, Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղում, բանվորի ընտանիքում: 1953թ. ավարտել է հայրենի գյուղի դպրոցը, իսկ 1958 թ.՝ Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ աստղաֆիզիկոսի որակավորմամբ:

Նրա համար բախտորոշ էր ասպիրանտական ուսումնառությունն ու մասնագիտացումը Մոսկվայում: Ռ. Մարտիրոսյանի գիտական ղեկավարությունը ստանձնում է համաշխարհային ճանաչում ունեցող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ա. Մ. Պրոխորովը:

Խորը ու հիմնարար պատրաստություն ստանալով՝ հենց Մոսկվայում նա կատարել է մի շարք գիտական ուշագրավ հետազոտություններ և դարձել ռադիոաստղագիտության բնագավառում քվանտային ուժեղարարների կիրառման առաջամարտիկներից մեկը:

1964 թ. Ռադիկ Մարտիրոսյանն իր աշխատանքային գործունեությունը շարունակել է հայրենիքում՝ ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի նորաստեղծ ինստիտուտում, որտեղ հիմնել է էլեկտրամագնիսական ալիքի գերբարձր հաճախականությունների՝ տարբեր տիրույթներում քվանտային ուժեղարարների ստեղծման համար անհրաժեշտ նոր ակտիվ նյութերի ուսումնասիրության գիտական նոր ուղղություն:

Գիտության մեջ ծանրակշիռ ներդրումների համար Ռ. Մարտիրոսյանն ընտրվել է Հայաստանի ԳԱ թղթակից (1986 թ.), ապա իսկական անդամ (1990 թ.):

Նրա ղեկավարությամբ ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտն ակտիվորեն մասնակցել է միութենական և միջազգային մի շարք ծրագրերի: Հատկապես արգասաբեր է եղել Ռ. Մարտիրոսյանի մասնակցությունը տիեզերական տարածության ուսումնասիրման ծրագրերին, մասնավորապես ,Վեգաե նախագծի իրականացմանը:

Ռ. Մարտիրոսյանը գիտական գործունեությունը մշտապես զուգակցել է մանկավարժական բեղմնավոր աշխատանքի հետ:

1993 թ. ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը նշանակվել է ԵՊՀ ռեկտոր: Կարճ ժամանակահատվածում նա մշակել է գիտական հետազոտությունների և կրթության նյութատեխնիկական բազայի զարգացման դժվարությունների հաղթահարման և բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստման ծրագրեր:

2006 թ. Ռ. Մարտիրոսյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ նախագահ: Հետխորհրդային տարածքում գիտնականի ու գիտության խաթարված վարկը, գիտության թերֆինանսավորումը, մասնագետների արտահոսքը պահանջում էին ակադեմիայի կառուցվածքի օպտիմալացում, նոր պայմաններում գիտական հետազոտությունների իրավական հենքի ստեղծում, զարգացման հեռանկարային ուղղությունների կանխորոշման հետ կապված վերափոխումներ:

Անցած տարիներին ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ կատարվել են ակադեմիական հանրության համախմբման, ԳԱԱ ներուժի պահպանման, միջազգային գիտական կապերի ընդլայնման ու բազմաբնույթ դարձնելու կարևոր քայլեր: Առանձնապես հիշատակելի են օրենսդրական ծրագրերի իրականացման, տնօրենների կազմի երիտասարդացման, հեռանկարային գիտական ուղղություններում կողմնորոշման, նոր տեխնոլոգիաների մշակման ու ներդրման, ինովացիոն գործունեության զարգացման ոլորտներում ձեռքբերումները: Այդ տարիներին մեծ ուշադրություն է դարձվել հիմնարար, կիրառական (ինովացիոն) հետազոտությունների համամասնությունների հաշվեկշռին, բազմաթիվ առաջարկներ են ներկայացվել պետական և գործարար կառույցներին, բարձրացվել է ՀՀ ԳԱԱ ցանցային և գիտական սարքավորումների որակը, կյանքի է կոչվել Բյուրականի՝ երկարամյա վերականգնողական աշխատանքներ պահանջած 2.6 մ դիտակը, տեղադրվել են նորագույն սարքավորումներ բնական գիտությունների ոլորտում: Ծանրակշիռ է ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանի դերը ՀՀ ԳԱԱ արտասահմանյան հայազգի անդամների ինստիտուտի ստեղծման գործում:

Վերջին տարիներին բազմաթիվ նոր կապեր են հաստատվել միջազգային գիտական կենտրոնների հետ՝ հայաստանյան գիտնականների համար բացելով համատեղ հետազոտությունների հորիզոններ:

ՀՀ ԳԱԱ 2020թ. գիտական և գիտակազմակերպական...

➢1 լի արտադրություն: Մի կողմից լրացուցիչ ֆինանսական աղբյուրներից օգտվելու հնարավորություն է, մյուս կողմից՝ կիրառական արդյունքների ներդրում:

Շատ կարևոր է հետազոտական բազայի արդիականացումը. վերջին 2 տարում մի քանի ինստիտուտ կարողացել է ձեռք բերել որոշ նոր սարքավորումներ՝ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, Ֆիզիկական հետազոտությունների, Քիմիական ֆիզիկայի ինստիտուտները, էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը և այլն: Նոր իշխանությունների ծրագրում այս հարցն առկա է, հիմա էլ նախատեսվում են մրցույթներ կառավարության կողմից: Պայմանները բավականին խիստ են, պետք է կոմիտեի հետ քննարկումներ կազմակերպել՝ պարզաբանելու մրցույթների պայմանները:

Միջազգային համագործակցությունը կարգավորվում է միջազգային կապերի վարչության, միջազգային գիտական և տեխնոլոգիական ծրագրերի և սփյուռքի բաժինների միջոցով: Բնական է, համավարակի պայմաններում նկատելի է միջազգային կապերի թուլացում, սակայն այս դժվարին պայմաններում անգամ ակադեմիական կառույցները կարողացել են հեռավար եղանակով կազմակերպել գիտաժողովներ, քննարկումներ (հատկապես հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը): Ակադեմիայի կազմակերպությունները շարունակել են իրենց մասնակցությունը միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին: Ընդհանուր առմամբ եվրոպական Հորիզոն-2020 ծրագրին 285 կազմակերպության 248 հայտ է ներկայացվել, որոնցից հավանության են արժանացել 34-ը՝ մոտ 3.8 մլն եվրո ընդհանուր ֆինանսավորմամբ: Հավանության արժանացած նախագծերից 21-ում ներկայացված է ԳԱԱ համակարգի 6 կազմակերպություն՝ շուրջ 2 մլն եվրո ընդհանուր ֆինանսավորմամբ: Խոշոր ծրագրերից են նաև ՄԳՏԿ-ի ծրագրերը, որոնց մասնակցել են նաև ակադեմիայի կազմակերպությունները: Միջազգային ծրագրերով ֆինանսավորման ընդհանուր ծավալը 1 մլն դոլար է:

Կադրերի հարցում ունենք խնդիրներ՝ կապված գիտական աշխատանքներում երիտասարդ կադրերի ներգրավման հետ: Խնդիրներն առկա են թե՛ նյութական խրախուսման, սոցիալական, թե՛ աշխատանքների բովանդակային հարցերում: ԳԱԱ համակարգում առ 01.01 2021թ. ընդգրկված են 40 ակադեմիկոս և 49 թղթակից անդամ, 19 ակադեմիկոս և 18 թղթակից անդամ աշխատում են ակադեմիայի համակարգից դուրս: Հաշվետու տարում վախճանվել է ակադեմիայի 7 անդամ: Վերջին ընտրությունից հետո ընկած ժամանակահատվածում ունեցել ենք 35 անդամի կորուստ: Առ 01.01 2021թ. ԳԱԱ համակարգում աշխատում է 3507 մարդ, որոնցից 2088-ը գիտական աշխատողներ են՝ 295-ը դոկտորներ, 1013-ը գիտության թեկնածուներ, 780-ը գիտական աշխատողներ՝ առանց գիտական աստիճանի: Հաշվետու տարում ԳԱԱ համակարգում աշխատանքի է ընդունվել 119 երիտասարդ մասնագետ, որոնցից 38-ն ընթացիկ տարվա շրջանավարտներ են: Համակարգի աշխատակիցներից 4-ը պաշտպանել է դոկտորական, 17-ը՝ թեկնածուական ատենախոսություններ:

Ստացել ենք Կառավարության որոշման նոր նախագիծ, ըստ որի 2022թ. հունվարից գիտական աշխատողի աշխատավարձը կբարձրանա, ինչը որոշ չափով կլուծի սոցիալական խնդիրները:

Կադրային պոտենցիալի մեր հիմնական կենտրոններից է գիտակրթական միջազգային կենտրոնը: Սեր համակարգի մոտ 600 աշխատող մասնակցում է կադրերի պատրաստման գործընթացին՝ ցույց տալով ակադեմիայի համակարգի ռեալ համագործակցությունը բուհերի հետ: Ակադեմիան նաև պատրաստ է ընդլայնել համագործակցությունը, իրականացնել համագործակցության ձևերի փոփոխություն: Նոր օրենքում կա ծայրաստիճան վտանգավոր մի դրույթ, որով վերացվում է ասպիրանտական ուսուցումն ինստիտուտների բազայի հիման վրա, ինչը տարիներ շարունակ եղել է գիտահետազոտական կազմակերպությունների կադրերի պատրաստման հիմքը: Գիտակրթական միջազգային կենտրոնն իրականացնում է ուսուցումը և? մագիստրոսական, և? ասպիրանտական ծրագրերով, ցավոք, հասկանալի պատճառներով, դիմորդների թիվը պակասել է: Բաժանմունքները պետք է ուշադրություն դարձնեն արդիական մասնագիտություններով դիմորդներ ունենալու խնդրին:

Խոսելով ֆինանսավորման մասին՝ պետք է նշեմ, որ ակադեմիայի տարեկան հաշվետվության մեջ ֆինանսավորումը բաժանված է երկու մասի՝ բյուջետային և արտաբյուջետային: Բյուջետային ֆինանսավորումը տրվում է պետական աղբյուրներից, կազմում է 8 միլիարդ դրամ. վերջին 30 տարում այսպիսի թիվ չենք ունեցել: Բանն այն է, որ երեք տարվա ընթացքում արվել են տնտեսումներ, դրանք տրվել են որոշ ինստիտուտների, մի քանի ինստիտուտ գումարներ է ստացել պաշտպանության նախարարությունից: Տարվա ռեալ ֆինանսավորման թիվը մոտ 7 միլիարդ է, ինչը համապատասխանում է նախորդ տարվա ցուցանիշին: Արտաբյուջետային ֆինանսավորման մեջ մտնում են ինստիտուտների մատուցած ծառայությունից, արտադրությունից ստացված գումարները, միջազգային դրամաշնորհները. ընդհանուր առմամբ այն կազմում է մոտ 1 միլիարդ դրամ: Ունենք նաև այդ բնույթի աշխատանքների որոշակի նվազում:

Սոցիալական ոչ մի նոր ծրագիր չի իրականացվել, բացառությամբ բնակելի շենքի շարունակվող շինարարությունը, որը թույլ կտա համակարգի աշխատողներին բնակարաններ ձեռք բերել մատչելի գնով:

ՀՀ ԳԱԱ 2020թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇՈՒՄ Է

2020 թ. Հայաստանի Հանրապետությունը կանգնեց ծայրահեղ ծանր երկու իրավիճակի դեմ հանդիման՝ COVID-19 համավարակը և Ադրբեջանի սանձազերծած 44-օրյա պատերազմը: Ահռելի կորուստներ կրեց երկրի տնտեսությունը, բնականաբար, խաթարվեց նաև ԳԱԱ համակարգի բնականոն գործունեությունը: Սակայն ի պատիվ ԳԱԱ համակարգի գիտական և գիտահետազոտական կազմակերպությունների՝ պահպանվեց պատշաճ մակարդակի գիտական արդյունք ստանալու ավանդույթը, կատարվեցին հիմնարար և կիրառական տարաբնույթ գիտական հետազոտություններ:

Քննարկելով ԳԱԱ 2020 թ. հաշվետվությունը, ԳԱԱ ընդհանուր ժողովն արձանագրում է, որ ԳԱԱ համակարգի գիտական և գիտահետազոտական կազմակերպությունների գործունեությունը նպատակաուղղվել է ինչպես նոր գիտական արդյունքների ստացմանը, այնպես էլ ենթակառուցվածքների պահպանմանը:

Համակարգի կազմակերպությունները, հաղթահարելով դժվարին պայմանները, կարողացել են պահպանել իրենց ենթակառուցվածքները և շարունակել հիմնարար ու կիրառական բնույթի գիտական մշակումները:

Միջազգային գլոբալ ծրագրերի շրջանակում սկսվել են երկրի արբանյակային տեխնոլոգիաների կիրառմամբ քարտեզագրման և բնական աշխարհի մոլեկուլա-գենետիկական դասակարգման աշխատանքները:

Այժմ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության գոյապահպանման համար կարևորվում են երկակի նշանակության և պրակտիկ կիրառական ելքով հետազոտությունները:

Համակարգի կազմակերպությունների և բուհերի միջև շարունակվել է ակտիվ համագործակցությունը տարբեր հարթակներում:

Արձանագրելով հաշվետու ժամանակաշրջանում համակարգում գրանցված դրական տեղաշարժերը և ձեռքբերումները՝ ընդհանուր ժողովը միաժամանակ նշում է առկա որոշ բացթողումներ և թերություններ: Վերջիններս ստույգ ուղղություններում, կենտրոնացված առաջնահերթությունների բացակայության պայմաններում, գիտական արդյունքների թերի ներդրման հետևանք են: ՀՀ կառավարությանն ուղղված ԳԱԱ տասնյակ ինովացիոն առաջարկներից ոչ մեկը դեռևս չի ներդրվել՝ մասնավորապես գիտության և պրակտիկայի միջև գործուն մեխանիզմների բացակայության պատճառով:

ԳԱԱ գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ժողովը որոշում է.

1. Հավանություն տալ ԳԱԱ 2020 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեությանը:

2. Ձեռնարկել միջոցներ՝ պահպանելու հիմնարար գիտության, որպես ԳԱԱ կարևորագույն առաքելության դերը՝ զուգակցելով հիմնարար ուսումնասիրությունները կիրառական մշակումների և դրանց արդյունքների ներդրման հետ, կատարել հետազոտությունների թեմատիկայի արդիականացում:

3. Նախաձեռնել հիմնարար հետազոտությունների արդյունքների առևտրայնացման ակտիվ գործունեություն, երկրի տնտեսության զարգացումը խթանելու նպատակով իրագործել արդյունավետ մշակումներ և դրանք ներդրման նպատակով առաջարկել ՀՀ կառավարությանը և անհատ գործարարներին:

4. Դիմել ԳԱԱ նախագահությանը՝ կառավարության առջև բարձրացնել բազային ֆինանսավորման ծավալների մեծացման հարցը, որը կնպաստի նաև երիտասարդ կադրերի ներգրավմանը գիտության ոլորտ:

5. Դիմել ԳԱԱ նախագահությանը՝ կառավարության առջև բարձրացնել գիտական աստիճանի համար գիտաշխատողներին տրվող հավելավճարները հարկերից ազատելու և կենսաթոշակի անցած գիտաշխատողների կենսաթոշակի գումարի մեջ այն ներառելու մասին հարցերը:

6. Ընդլայնել համագործակցությունը ԳԱԱ կազմակերպությունների, բուհական համակարգի և գիտաարտադրական կազմակերպությունների միջև:

7. ՀՀ կառավարության կողմից գիտության ոլորտին հատկացվող հավելյալ ֆինանսավորումը տրամադրել համակարգի կազմակերպություններին՝ ըստ յուրաքանչյուր կազմակերպության գործունեության արդյունավետության, ինչը կխթանի առողջ մրցակցությունը:

8. Ընդգրկել Արցախի և սփյուռքի գիտնականներին ակադեմիական համակարգի գիտական կազմակերպությունների աշխատանքային խմբերում՝ պահպանելով և խորացնելով համագործակցությունը Արցախի գիտական կենտրոնի հետ:

9. Աջակցել ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը հետպատերազմական շրջանում Սևանա լճի վիճակի մոնիթորինգի և պահպանության գործընթացում:

10. Դիմել ԳԱԱ նախագահությանը՝ միջնորդել ՀՀ կառավարությանը վերականգնել «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի մանրէների ավանդադրման կենտրոնի «Մանրէների ազգային հավաքածուի՝ գենոֆոնդի պահպանումը» ազգային արժեք ներկայացնող ծրագրի ֆինանսավորումը, քանի որ ծրագիրն ունի պետական կարևորագույն նշանակություն:

11. Հանձնարարել բաժանմունքների բյուրոներին և գիտական հանդեսների խմբագիրներին՝ նախաձեռնել հրատարակվող գիտական հանդեսները միջազգային տեղեկատվական շտեմարաններում ընդգրկելու միջոցառումներ:

12. Խթանել ակադեմիայի համակարգի գիտական կազմակերպությունների կողմից տարվող ռազմապաշտպանական բնույթի աշխատանքները, ցուցաբերել գիտական և գիտամեթոդական օգնություն պաշպանության ոլորտի կազմակերպություններին, տեխնիկական ուղղվածությամբ բուհերի գիտական խորհուրդներին, քննարկել և ընդլայնել մասնագիտացումների ու համապատասխան դասընթացների ցանկը, որոնք հույժ անհրաժեշտ են ժամանակակից պաշտպանական միջոցների ստեղծման համար:

13. Ակտիվացնել պայքարը մեր որոշ հարևանների՝ հայ ժողովրդի պատմության ու ազգային մշակույթի յուրացումների և կեղծարարության դեմ, ակտիվացնել այդ թեմաներով օտարալեզու աշխատությունների հրատարակումը, ուժեղացնել միջազգային կազմակերպությունների և գործընկերների հետ համագործակցությունը՝ նրանց մասնակից դարձնելով մեր ինքնության և ազգային արժեքների պահպանությանը:

14. Էապես մեծացնել հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին նվիրված հետազոտությունների քանակը, այդ թվում՝ հայ ժողովրդի կորուստների հատուցման միջազգային կառուցակարգի մշակման աշխատանքները:

15. Ակադեմիայի համակարգի կազմակերպությունների հետազոտական ուսումնասիրություններում էականորեն բարձրացնել միջգիտակարգային գիտական թեմաների տեսակարար կշիռը՝ որպես նշանակալից գիտական արդյունքների ստացման հիմնական գործընթաց:

16. Դիմել ՀՀ կառավարությանը՝ 2021թ. անցկացնել ԳԱԱ անդամների ընտրություններ:

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԿՐՏԻՉ Ա ԽՐԻՄՅԱՆԻ ԵՎ ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 200-ԱՄՅԱԿՆԵՐԻՆ

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքում ավանդույթ է ձևավորվել հայ գրականության և մշակույթի մեծերի նշանակալից հոբելյաններն առանձին գիտական նստաշրջաններով նշել նաև Ռուսաստանի Դաշնության զույգ մայրաքաղաքների ակադեմիական հաստատություններում:

2019 թ. Հովհաննես Թումանյանի և Կոմիտաս վարդապետի 150-ամյակները Մոսկվայում նշվեցին Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի և Ռուսաստանի Հայոց թեմի հետ համատեղ:

2020 թ. ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի, Մաշտոցի անվան Մատենադարանի ու Երևանի պետական համալսարանի համատեղ կազմակերպմամբ եռօրյա նստաշրջանով հանդիսավորապես նշվեցին Մկրտիչ Ա Խրիմյանի և Հայր Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակները: Զուգահեռ ծրագրված էր Պետերբուրգում Պետական էրմիտաժի և Պետերբուրգի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետի հետ համատեղ գիտական հատուկ նստաշրջան նվիրել Խրիմյան Հայրիկին և Ղևոնդ Ալիշանին: Համավարակի պատճառով նախ գիտաժողովը հետաձգվեց և ապա տեղի չունեցավ Արցախյան 44-օրյա պատերազմի պատճառով:

Կարևորելով գիտաժողովի դերը ո՛չ միայն այս երկու նվիրական անունների կյանքի և գիտագրական ժառանգության ուսումնասիրման, այլև հայ-ռուսական գիտական համագործակցության և պատմական կապերի հետազոտման տեսանկյունից՝ այն կազմակերպվեց Պետերբուրգում սույն թվականի ապրիլի 27-28-ին: Գիտաժողովը կրում էր հետևյալ խորագիրը՝ «Հայ մեծ լուսավորիչներ Մկրտիչ Ա Խրիմյանը և Հայր Ղևոնդ Ալիշանը»:

Գիտաժողովը բացվեց Ռուսաստանի և Նոր Նախիջևանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի օրհնության խոսքով:

Գիտաժողովի մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեցին Պետական էրմիտաժի տնօրեն, ակադեմիկոս Միխայիլ Պիոտրովսկին, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ՌԴ ԳԱԱ թղթակից անդամ, Պետերբուրգի արևելյան ձեռագրերի ինստիտուտի տնօրեն Իրինա Պոպովան, Մխիթարյան միաբանության անդամ Հ. Վահան Օհանյանը, Պետերբուրգի համալսարանի Մերձավոր Արևելքի ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր Նիկոլայ Դյակովը, «Ռուսական աշխարհ» հիմնադրամի Պետերբուրգի մասնաճյուղի տնօրեն Օլեգ Մուկովսկին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Վարդան Դևրիկյանը:

Ինչպես նշվեց ողջույնի խոսքերում, գիտաժողովի անցկացման վայր էր ընտրվել Պետերբուրգը, որովհետև թե՛ Խրիմյանի և թե՛ Ալիշանի կյանքի մի շարք դրվագներ սերտորեն կապված են Ռուսական կայսրության մայրաքաղաքի հետ: Կաթողիկոսական ընտրությունից և Ս. Էջմիածին հասնելուց հետո Մկրտիչ Ա Խրիմյանն այցելել և փառավոր ընդունելության է արժանացել ռուսական արքունիքում, ինչպես նաև սերտ կապեր է ունեցել քաղաքի հայ հասարակության ներկայացուցիչների հետ:

Նույնը վերաբերում է Ղևոնդ Ալիշանին, ով տասնամյակներ շարունակ նամակագրական կապեր է ունեցել Մոսկվայի և Պետերբուրգի տարբեր գիտնականների, այդ թվում՝ Ժան Մարի Բրոսսեի, Նիկողայոս Մառի և Վլադիմիր Ստասովի հետ:

Գիտաժողովի մի շարք զեկուցումներ նվիրված էին հայ ժողովրդի այս երկու մեծ զավակների՝ Պետերբուրգի հետ ունեցած գիտահասարակական կապերին, ինչպես նաև հայ ժողովրդի կյանքում Ռուսաստանին վերապահված դերի՝ Ալիշանի և Խրիմյանի ընկալմանը:

Գիտաժողովի ընթացքում ընթերցվեց 38 զեկուցում: Ուրախալի էր հատկապես այն հանգամանքը, որ զեկուցումներից վեցի հեղինակները Մոսկվայի և Պետերբուրգի գիտնականներ էին, ինչը վկայում է ռուսական գիտական միջավայրում հայագիտական ավանդների շարունակման մասին:

Ինչպես որ Խրիմյանը և Ղևոնդ Ալիշանը գիտագրական հարուստ ժառանգություն թողեցին և ապրեցին ազգային-հասարակական և եկեղեցական բուռն կյանքով, այնպես և թեմատիկ լայն ընդգրկում ունեին նրանց նվիրված զեկուցումները:

Առանձին զեկուցումներ նվիրվեցին Ալիշանի բանաստեղծական ժառանգությանը և թարգմանություններին, աշխարհագրական ուսումնասիրություններին:



Զեկուցումների մի խումբ նվիրված էր Խրիմյան Հայրիկի ազգային-եկեղեցական գործունեությանը:

Մի շարք զեկուցումներով հատուկ քննության ենթարկվեցին հայ երգարվեստի զարգացման գործում Ալիշանի և Խրիմյանի ունեցած դերը, ինչպես նաև նրանց նվիրված գրական, հուշագրական, երաժշտական և արվեստի ստեղծագործությունները:

Վերլուծվեցին նաև Խրիմյանի և Ալիշանի ստեղծագործությունների լեզվական յուրահատկությունները և չափածոյի տաղաչափական համակարգը, նրանց խմբագրական գործունեությունը և հրատարակած ամսագրերի ձևավորումների գեղարվեստական առանձնահատկությունները:

Վեր հանվեցին գրական, աշխարհայացքային և մարդկային այն ընդհանրությունները, որոնք առկա էին նվիրական այս երկու դեմքերի միջև:

Գիտաժողովի արդյունքների ամփոփման ժամանակ ռուսական կողմը պատրաստակամություն հայտնեց ամեն տարի կազմակերպել հայագիտական մեկ գիտաժողով՝ նվիրված որևէ նշանակալից հոբելյանի կամ որևէ թեմայի:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ՌՈՒԲԵՆ ԿՈՍԵՄՅԱՆ՝ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆՎԻՐՅԱԼԸ

Ազգային ակունքները բազմաթիվ պայմաններից մեկն է ստեղծագործությունը համամարդկային շարքին դասելու համար.- իր ստեղծագործական կյանքի ամբողջ ընթացքում այս սկզբունքով է ապրում կանադաբնակ մեր հայրենակից, ջութակահար, մենակատար, մանկավարժ **Ռուբեն Կոսեմյանը** :

Տաղանդաշատ արվեստագետի անունը հայտնի է Ռուսաստանում, Եվրոպայում և աշխարհի բազմաթիվ երկրներում՝ մինչև Վրաստան, Իրան, Մեքսիկա, Թայվան, Մալազիա: Նա հանդես է գալիս որպես մենակատար տարբեր նվագախմբերի հետ՝ Կանադայում և արտասահմանում: Նա աշխարհի բոլոր բեմերում մատուցում է հայ մշակույթի գոհարները՝ սկսած միջնադարյան շարականներից մինչեւ Կոմիտաս, մինչև Արամ Խաչատրյան, մինչև Էդվարդ Միրզոյանի, Ղազարոս Սարյանի, Կարեն Խաչատրյանի, Էդուարդ Բաղդասարյանի, Էդուարդ Հայրապետյանի ստեղծագործություններ:

Ռուբեն Կոսեմյանն իր ստեղծագործական կյանքի ուղին սկսել է 9 տարեկանից՝ ելույթներ ունենալով միջազգային հեղինակավոր բեմերում: Չորս տարեկանից երաժշտության առաջին դասերն առնել է հորից՝ ալտահար, մենակատար, անսամբլիստ, սիմֆոնիկ նվագախմբերի կոնցերտմեյստեր, մանկավարժ Ալեքսանդր Կոսեմյանից. նա եղել է Կոմիտասի անվան Լարային Քառյակի ալտահար (1990 թվականից):

Ալեքսանդր Կոսեմյանն իր ավանդն է բերել միջնադարյան հայ հոգեևոր երաժշտությունը վեր հանելու, փոխադրելու նվիրական գործում (նրա ձայնագրությունները մտել են Հայաստանի պետական ռադիոյի Ոսկե ֆոնդի մեջ):

Ռուբեն Կոսեմյանը հայրիկից ստացավ նաեւ մեր ազգային մշակույթը գնահատելու? առաջին դասերը: Դրա վկայությունն են հայ մշակույթը պահպանելու և աշխարհով մեկ տարածելու նպատակին ուղղված իր ջանքերը: Հեղինակել է բազմաթիվ ձայնասկավառակներ, որտեղ ի թիվս եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործությունների՝ միջազգային ունկնդրին է ներկայացնում հայ մշակույթի անգին մարգարիտները...

Եվ ահա 2020 թ. Սանկտ-Պետերբուրգում լույս տեսավ Ռուբեն Կոսեմյանի՝ ջութակի և դաշնամուրի համար փոխադրությունների առաջին ժողովածուն, նվիրված Կոմիտասի 150-ամյակին, որտեղ տեղ գտան Կոմիտասի, Ֆ. Լիստի, Պ. Չայկովսկու, Ս. Ռախմանինովի ստեղծագործությունների փոխադրությունները («Պլանետա Մուզիկի» հրատարակչություն, Ռուսաստանի Դաշնություն): Ժողովածուն և դաշնամուրային մասը խմբագրել է դաշնակահար **Նատալյա Մնացականյանը** :

Մենք բացառիկ առիթ ունենք զրուցելու նրա հետ՝ ձայնասկավառակի ստեղծման մասին:

- Ձայնասկավառակի ստեղծման գաղափարը նոր՝ ոչ ջութակային երաժշտություն նվագելն էր...Սիրելի ստեղծագործությունները դարձան փոխադրումներ: Առաջարկեցին Ռուսաստանում ժողովածուներ հրատարակելու: Եվ առաջարկ եղավ այդ ժողովածուների հետ միասին ձայնասկավառակ թողարկել: Իհարկե, մեկ ձայնասկավառակի համար բոլոր փոխադրումները շատ էին, այդ պատճառով որոշեցինք ձայնագրել ընդամենը մի քանի ստեղծագործություն: Իսկ ապագայում ուզում ենք ձայնագրել նաև մյուս փոխադրումները:

- Կոմիտասի հատկապես ո՞ր ստեղծագործություններն են տեղ գտել ձայնասկավառակում,- դիմում եմ արվեստագետին:

- Ժողովածուների մեջ ընդգրկվել են կոմիտասյան հինգ ստեղծագործություններ և Առնո Բաբաջանյանի պիեսներից մեկը:

Կոմիտասի այդ ստեղծագործություններն են՝ «Չինար ես», «Հաբրբան», «Կաքավի երգը», «Գարուն ա», «Երկինքն ամպել ա»... Բոլոր ստեղծագործությունները տարբերվում են իրենց բնույթով: Իսկ Առնո Բաբաջանյանը պատմել է, որ Արամ Խաչատրյանն իրեն սովորեցրել է՝ երբեք չհեռանալ ազգային ակունքներից:

Կոմիտասի ժառանգությունը հայկական քաղաքակրթության այցեքարտերից մեկն է: Հիշենք Կլոդ Դեբյուսիի՝ ժամանակին նրա մասին ասված խոսքերը. «Եթե Կոմիտասը գրեր միայն «Անտունին», այդ էլ բավական կլիներ նրան խոշոր արվեստագետ համարելու»: Ռուբեն Կոսեմյանի համոզմամբ՝ Կոմիտասն այսօր իր անսասան տեղն ու դիրքն ունի համաշխարհային մշակույթի գանձարանում: Եվ նա շարունակում է աշխարհով մեկ տարածել կոմիտասյան երաժշտությունը և հայ մշակույթի՝ հազարամյակների խորքից եկող մյուս արժեքները...

- Մոտ ապագայում լույս է ընծայվելու երեք ժողովածու և մեկ ձայնասկավառակ, որի մեջ կընդգրկվեն Ալեքսանդր Կոսեմյանի փոխադրությամբ երեք շարականներ՝ իր իսկ կատարմամբ և մի շարք իմ փոխադրումներից, այդ թվում՝ Կոմիտաս: Հայաստանում մի քանի ուսումնական հաստատություններ արդեն օրինակներ են պատվիրել: Կոմիտասի փոխադրումները մտադիր եմ կատարել տարբեր բեմերում, բայց առաջին հերթին ցանկանում եմ կատարել հին հայկական եկեղեցիներում և ձայնագրել դրանք...

Սրանք են Ռուբեն Կոսեմյանի ապագա ծրագրերից երկուսը... Միայն պատկերացնել կարող ենք, թե նրա կատարումները որքան ներդաշնակորեն են միաձուլվելու մեր հնավանդ վանքերի ու եկեղեցիների ճարտարապետությանը՝ աշխարհին ներկայացնելու հայ մշակույթն իր ամբողջության մեջ: Այսպիսի ծրագիր կյանքի կոչելը, վստահ ենք, նպաստելու է նաև նոր սերնդին իր արմատներին է՛լ ավելի մոտեցնելուն...

Ռուբեն Կոսեմյանը հաճախ է վերադառնում Հայաստան: Նա շարունակում է իր անմնացորդ նվիրումը բերել մեր մշակութային կյանքը զարգացնելու և նոր նշաձողի բարձրացնելու գործին՝ լինելով տոհմիկ երաժիշտ:

Համլիկ ՊՈՂՈՍՅԱՆ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ «ՆԱՄԱԿԱՆԻՆ»

Նվիրվում է մեծ բյուզանդագետի և հայագետի ծննդյան 150-ամյա հոբելյանին:

Նշանավոր մարդկանց նամակները համազգային ու համամարդկային հնչեղություն ունեցող երևույթներ են: Սա անտիկ ժամանակներից եկող իրողություն է, որի դրսևորումներն առկա են հայ հին և միջնադարյան, նաև նոր և նորագույն գրականության մեջ: Բավական է հիշել Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Ներսես Շնորհալու, Խաչատուր Աբովյանի, Գևորգ Ախվերդյանի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի և ուրիշների հասարակական արժեք ու հնչեղություն ունեցող նամակները:

Ահա մեր ձեռքի տակ են միջազգային հռչակ ունեցող բյուզանդագետ ու հայագետ, բանասեր, պատմաբան Նիկողայոս Ադոնցի 135 նամակները՝ սկսած 1893 թվականից մինչև 1940 թվականը:

Ադոնցն ունեցել է հետաքրքիր կյանք: Ծնված լինելով 1871-ին Սյունիքի Բռնակոթ գյուղում՝ քահանայի ընտանիքում, մանուկ հասակից իմացել է, որ ինքն ունի ազնվական ծագում թե՛ հայրական, թե՛ մայրական կողմից: Տղան կրթվել է Տաթևի վանքի դպրոցում, հետո Գևորգյան ճեմարանում, այնուհետև Թիֆլիսի ռուսական գիմնազիայում: Մշտապես ունենալով ուսման մեծ ծարավ՝ ազգային մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշյանի թոշակով սովորել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ու պատմաբանասիրական ֆակուլտետներում, որտեղ նրա արտասովոր ուսումնատենչությունը հիացմունք է պատճառել դասախոսներին՝ հատկապես նրա ուսուցչին ու գիտական ղեկավարին՝ Նիկողայոս Մառին: Վերջինիս հովանավորությամբ Ադոնցը մեկնել է՝ Եվրոպայի նշանավոր բուհերում ու գրադարաններում ուսումը շարունակելու: Եղել է Լոնդոնում, Փարիզում, Վիեննայում, Մյունխենում, Ստրասբուրգում, Վենետիկում, Բրյուսելում ու Եվրոպայի այլ քաղաքներում: Աշակերտել է նշանավոր բյուզանդագետների ու հայագետների, հմտացել անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի, հին դասական լեզուների՝ հունարենի, ասորերենի, լատիներենի, տարբեր ազգերի սեպագրերի լեզուն հասկանալու մեջ:

Նիկողայոս Ադոնցի 135 նամակները՝ համապատասխան ծանոթագրություններով, հրատարակության է պատրաստել ողջ կյանքն Ադոնցի գիտական ժառանգության ուսումնասիրմանն ու հրատարակմանը նվիրած պատմաբան Պետրոս Հովհաննիսյանը: Նամակներին է նվիրված նշանավոր գիտնականի երկերի VII հատորը:

Ադոնցի նամակներում գրեթե ոչինչ չենք տեսնում նրա կենցաղին վերաբերող. ամեն ինչ կապված է ուսման (սա նամակների առաջին շրջանն է), իսկ հետո նրա գիտական, հասարակական գործունեության հետ: Ադոնցը երկար տարիներ աշխատել է Բրյուսելի համալսարանում: Մուշեղ Իշխանը, որը երկու տարի ուսանել է այդ համալսարանում, իր հուշերում պատմում է, թե համալսարանում այն կարծիքը կար, որ Ադոնցը Բրյուսելի համալսարանի դասախոսներին «կտանի ջուրը ու ծարավ հետ կբերի»: Ադոնցն իմացել է արժևորել իրեն ու իր ազգը օտարների առջև. «Նա հայ տղամարդ էր՝ բառի ավանդական, արդիական և ազնվական իմաստով»:

Ադոնցի նամակներն ուղղված են իր ժամանակի հայ և օտար պարբերականների գլխավոր խմբագիրներին, նույն կերպ նշանավոր հայ ու օտարազգի գիտնականներին, որոնց նա դիմում է գիտական ու ազգային հրատապ հարցերով:

Առաջին շրջանի նամակներում մեծ թիվ են կազմում Ն.Մառին ուղղված նամակները, որոնք գրված են Եվրոպայի ամենատարբեր քաղաքներից ու կապված են ուսման խնդիրների հետ: Այդ նամակներից, որոնք գերակշիռ մասով ռուսերեն էին, Ադոնցը պատմում է ուսման հետ կապված իր ձեռքբերումների, ապագա նպատակների, Եվրոպայի քաղաքներից ստացած տպավորությունների մասին: 1900 թվականի նոյեմբերի 18-ին Փարիզի մասին գրում է. «Քաղաքն իր տեսքով հրաշալի է ու իրոք գեղեցիկ: Հրաշք են հատկապես հրապարակները՝ զարդարված հիասքանչ հուշարձաններով: Ֆրանսիայի ողջ պատմությունը կարելի է ուսումնասիրել՝ թափառելով այգիներում ու հրապարակներում, բոլորովին ոչ վատ ձևով, ինչը գիտես գիմնազիայից»: Այդ թվականին Փարիզում բացվել է միջազգային ցուցահանդես, որում շատ ազգեր ունեցել են իրենց տաղավարները: Ադոնցը շրջել է ցուցահանդեսում, որտեղ չկար հայկական տաղավար, ու ռուսական և թուրքական տաղավարներում փնտրել հայկական ցուցանմուշներ: Ռուսական տաղավարում ցուցադրված է եղել Մոսկվայի Լազարյան ճեմարանի՝ 887 թ. գրված Ավետարանը: Փարիզի որոշ հայերի կրպակներում վաճառվում էին Տիգրան Մեծի և Ռուբինյանների մետաղադրամներ, որոնք ինքը զգուշացել է գնել՝ վախենալով, թե դրանք կեղծված են:

Մեծաքանակ են հայերենով Կարապետ Եզյանին գրված նամակները, որոնցում նա հայտնում է, թե մտադիր է Սորբոնի համալսարանում ուսումնասիրել Անտուան Մեյեի մոտ համեմատական լեզվագիտությունը, իսկ ասորերեն՝ Օգյուստ Կարիերի մոտ:

Նամակներում ապագա նշանավոր բյուզանդագետը հաճախ է խոսում բյուզանդական աղբյուրներում իր կատարած հետազոտությունների մասին՝ դրանք շարունակ համեմատելով հայ մատենագիրների հաղորդածների հետ: Նա շատ ջանադիր համեմատել է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» և Ամմիանուս Մարկելիանոսի երկերի՝ նույն անձերի ու պատմական դեպքերի մասին ներկայացնող պատումները:

Ադոնցն ուշադիր հետևում էր հայկական, նաև օտարալեզու մամուլին: Հատկապես շատ են նամակները՝ ուղղված «Հանդէս ամսօրեայի» խմբագրությանը, որին նա երկար տարիներ բաժանորդագրված էր:

1904-ին Ադոնցը իր հրատարակած «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսում շնորհակալություն է հայտնում Գ.Արիստակեսյանին, որը ստանձնել էր հանդեսը նյութապես ապահովելու պարտավորվածությունը, և ընթերցողներին հայտնում է, թե հանդեսի գեղարվեստական բաժինը խմբագրելու է հայտնի նկարիչ Վարդգես Սուրենյանցը:

Իր ուշադրության կենտրոնում պահելով արևմտահայ ու արևելահայ գրականությունը, փայլուն տիրապետելով հայերենի երկու ճյուղերին՝ Ադոնցն աշխատում էր հոգալ հայ երիտասարդ մեծատաղանդ գրողների խնդիրները լուծելու շնորհակալ գործը: 1904-ի մարտի 2-ին նամակով դիմում է Պետերբուրգի հայկական եկեղեցիների խորհրդին՝ Սորբոնի համալսարանի ուսանող Ատոմ Յարճանյանին օգնելու, որի մոտ ի հայտ են եկել թոքախտի նշաններ. «Նրա ապագան կապված է հայ գրականության հետ, և նրա կորուստը կորուստ է հայ գրականության համար»:

Լայն էին Ադոնցի պատմական ու բանասիրական հետաքրքրությունները: 1908 թվականի նոյեմբերի 18-ին Գալուստ Տեր-Մկրտչյանին գրած նամակում նա ասում է, թե Մառից իմացել է, որ Գ.Տեր-Մկրտչյանը ծաթ ազգի ծագման մասին նյութ է գտել հայկական աղբյուրներում: Հետագայում՝ 1911 թվականին, ռուսերենով լույս է տեսնում Ադոնցի «О происхождении Армянцатов» հոդվածը Պետերբուրգում: Այն հիմա զետեղված է հայագետի երկերի Ա (I) հատորում:

Մի քանի նամակ ունի՝ ուղղված ողջ կյանքը Ֆրիկի ստեղծագործությանը նվիրած Տիրայր վարդապետին, որը միայն 1952-ին Նյու Յորքում կարողացավ հրատարակել «Ֆրիկ, Դիվան» մեծարժեք ստվար հատորը, որում հերքում է բանաստեղծի կիլիկեցի լինելը և ըստ նրա բանաստեղծությունների լեզվի՝ նրան համարում է Արցախում ծնված:

Նամակներ կան ուղղված Կարապետ Կոստանյանին, որի մեծագույն գործը 1910-ին Ալեքսանդրապոլում Գրիգոր Մագիստրոսի թղթերի հրատարակումն էր: 1917 թվականի ապրիլի 28-ի նամակում Ադոնցն ասում է, թե 1916-ի օգոստոսի նամակը կորած է, որովհետև ինքը գնացել էր հայրենի երկիր: Նա 1916 թվականի ամռանը մասնակցել էր Վան, Մուշ, Կարին քաղաքներում իրականացված հնագիտական արշավներին:

Հայկական հարցը և հայ ժողովրդի պատմական իրավունքները եղել են գիտնականի գերխնդիրներից մեկը: 1918թ. ապրիլի 14-ին Ադոնցը հեռագիր է ուղարկել Գերմանիայի՝ Կ. Պոլսում նստող դեսպանին: Հեռագրում նա իրավացի զայրույթով գրում է. «Օգտվելով ռուսական բանակի նահանջից՝ թուրքական զորքերն անմիջապես ներխուժեցին անպաշտպան երկիրը, ընդ որում նրանք բնաջնջեցին ոչ միայն թուրքահայերին, այլև բոլոր ռուսահայերին: Հակադրվելով խաղաղության պայմաններին, որոնցով ճանաչվում էր ամբողջ Կովկասի ինքնորոշման իրավունքը, թուրքական զորքը շարժվեց Կարս ու Արդահան՝ ամայացնելով երկիրը և ոչնչացնելով քրիստոնյա բնակչությանը»: Ադոնցն այդ ժամանակ Պետրոգրադի հայ Ազգային խորհրդի լիազորն էր, միաժամանակ որպես պրոֆեսոր աշխատում էր Պետրոգրադի համալսարանում:

1920 թվականի նոյեմբերի 7-ին պրոֆեսորը զայրալից նամակ է ուղարկել Լոնդոնի «Թայմս» թերթի խմբագրին: Կարծես այսօր է գրվել այդ նամակը: Նա զայրույթով հիշեցնում է, թե ինչպես Ֆրանսիայի գեներալները սեթևեթում են թուրքական ավազակների հետ Կիլիկիայում ապաստանած մի բուռ հայերի դիակների վրա: Նա քննադատում է Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի կառավարողներին, որոնց խղճի վրա ընկած է Հայկական հարցը ծանր քարի նման: Կես դար է, որ հայերը տառապում են կեղծիքի ու դավաճանության ճնշման տակ. «Այժմ, երբ կատարվել է գրեթե անհնարինը, և նրանց մեջքին է իջել ռուսական կոմունիզմը՝ այս անգամ արդեն թուրքական բարբարոսության հետ»:

Իր նամակն Ադոնցը եզրափակում է այն եզրահանգմամբ, թե ***գուցե այնժամ հայերը մեկընդմիշտ կշրջվեն Եվրոպայից տառապալի համոզմամբ, որ մարդկային արժանիքներից լավագույնը՝ խիղճը, այնտեղ անհույս խլացել է:*** Այս նամակը տպագրվել է նաև Ադոնցի երկերի VI հատորում:

Ադոնցն իրավամբ իր վրա էր վերցրել հայ մտավոր կյանքը կարգավորողի սրբազան դերը: Նրան խիստ մտահոգում էր հայ նոր սերնդին հայրենասիրական ոգով ու ազգային արժանապատվությամբ դաստիարակելու խնդիրը:

1930 թվականի հոկտեմբերի 23-ին, դիմելով «Ապագա» թերթի խմբագրությանը, Ադոնցը Փարիզի հայ գրական Միության անունից հիշեցնում է, թե նոյեմբերի 8-ին լրանում են Միքայել Նալբանդյանի ու Ռափայել Պատկանյանի ծննդյան հարյուրամյակները: Նա համոզված է, որ հայ ժողովրդի համար թանկ պետք է լինեն Նալբանդյանի ու Պատկանյանի հայրենաշունչ ավանդները:

Ադոնցի համար հույժ կարևոր էր մասնագիտական գիտելիքներով զինված լինելը: Նա ուշադիր հետևում էր հայ մամուլին ու նրանում տպագրվող նյութերին: Կոստան Զարյանին ուղղված նամակում նա խիստ քննադատում է «Յառաջ» թերթի լրագրողներին. «Մամուլը անպատրաստ մարդկանց ձեռքին է: «Յառաջը» զեռունների մի բույն է, անկիրթ ու տգետ լակոտներ, որոնց հետ խոսել և վեճի բռնվել կնշանակե պատվել նրանց և նսեմացնել սեփական արժանապատվությունը»:

Ադոնցի վերջին նամակն ուղղված է Արտաշես Չիլինկարյանին: Դրանից իմանում ենք, որ 1939-ին գիտնականը մեկնել է Փարիզ ու դասախոսություն կարդացել «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի մասին, ցավոք ելույթը եղել է բանավոր՝ առանց գրառման: Որպեսզի դասախոսությունը դարձնի գրավոր, հարկավոր է ժամանակ, որ ինքը չունի: Եվրոպայում սկսվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմը, որը խորապես ընկճել էր գիտնականին. նա ատում էր հեղափոխություններն ու պատերազմները: Բացի այդ, ուներ առողջական լուրջ խնդիրներ: Ու առաջին անգամ նրա նամակներից մեկի մեջ տեսնում ենք վիատություն. «Խռովահույզ մթնոլորտն այնպես է ազդել, որ զգացի այն թուլությունը, որ գալիս է ծերությունից, թե վիատությունից: Ո՛չ անձնական, ո՛չ հայրենիքյան և ո՛չ ամենուրեքյան ոչ մի նշույլ չմնաց պայծառ և զվարթ լույսի, որ ողջագուրեր սառած էությունս նոր հույսերով: Վախում եմ, որ ծրագրած գործերս էլ մնան թերի և կամ նույնչափ վիատ, ինչպես ես»:

Իր տարագրության տարիների սկզբում Ադոնցը խոստովանում է, թե հեռանալով հայրենիքից, ինքն իր հարազատներին թողեց անօգնական վիճակում՝ փաստորեն ազգին ու գիտությանը ծառայելը գերադասելով նրանցից:

Նա միշտ երազում էր իր հայրենիքի վերածնունդը:

1929 թվականի ապրիլի 24-ին Փարիզում իր նախաձեռնությամբ ու նախագահությամբ տեղի ունեցած Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի սգահանդեսի ժամանակ նա հայրենակիցներին է դիմում հակիրճ, բայց ազդու խոսքերով. «Չկա հաղթանակ առանց պարտության: Երբ ծառի ճյուղերը կտրում են, նա թարմ ոստեր է արձակում: Ձեզնից յուրաքանչյուրը պետք է կատարի իր պարտականությունը՝ հանուն ազատության»:

Ադոնցի «Նամականու» մեջ բազում են նամակները՝ ուղղված Ն. Մառին, Ն. Ակինյանին, Գ. Հովսեփյանին, Թ. Գուշակյանին, Կ. Զարյանին և ուրիշների, որոնցում շարադրված դրույթները ելակետային են ու այսօր էլ կարևոր են լեզվաբանների, գրականագետների, քաղաքական գործիչների, պատմաբանների և ընդհանրապես գիտությամբ զբաղվող մարդկանց համար:

Ալիտա ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԵԳՈՐԻ ԱՍԱՏՐՅԱՆ

Հայ հասարակայնությունը, գիտական հանրությունն ու բարձրագույն դպրոցը ծանր ու անդառնալի կորուստ կրեցին: 2021 թ. ապրիլի 27-ին, կյանքի 86-րդ տարում COVID-19-ի պատճառով կյանքից անժամանակ հեռացավ պետական-քաղաքական ականավոր գործիչ, Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահ, Հյուսիսային համալսարանի գիտական կենտրոնի ղեկավար, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի խորհրդական, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Գրիգոր Եգորի Ասատրյանը:

Գրիգոր Ասատրյանը ծնվել է 1935թ. օգոստոսի 31-ին Էջմիածնի շրջանի Խզնավուզ (ներկայումս՝ Արագած) գյուղում:

Դպրոցից հետո նա ուսումնառությունը շարունակել է Երևանի պետական համալսարանում, որի տնտեսագիտական ֆակուլտետը 1958-ին ավարտել է գերազանցության դիպլոմով: Նույն թվականին ընդունվել և 1962-ին ավարտել է (արտադրությունից չկտրված) Հայաստանի գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ասպիրանտուրան, 1969-ին պաշտպանել դիսերտացիա և ստացել փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2015-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Համալսարանն ավարտելուն պես՝ 1958թ. հունիսին, նա պետական գործուղումով աշխատանքի է անցել Սովետական Հայաստանի Մինիստրների սովետի սովետական վերահսկողության հանձնաժողովում:

1970 թ. Գ.Ասատրյանն առաջ է քաշվել և ընտրվել ՀԿԿ Սպանդարյանի շրջանային կոմիտեի երկրորդ քարտուղար, որտեղ աշխատել է մինչև 1977թ.: 1977-1978թթ. նա զբաղեցրել է ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի պրոպագանդայի բաժնի վարիչի պաշտոնը:

1978-ին Գ. Ասատրյանն առաջ է քաշվել ղեկավար աշխատանքի. ընտրվել է ՀԿԿ Երևան քաղաքի Սպանդարյանի շրջանային կոմիտեի առաջին քարտուղար, որտեղ աշխատել է մինչև 1983թ.: Այդ ընթացքում՝ 1980-1981թթ., նա ԽՄԿԿ Կենտկոմի որոշմամբ, պահպանելով Սպանդարյանի շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնը, աշխատանքի է գործուղվել Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետություն, որտեղ աշխատել է որպես Խորհրդային Միության կոմկուսի Կենտկոմի խորհրդական Աֆղանստանի ժողովրդադեմոկրատական կուսակցության Կենտկոմում:

1983-ին Գ.Ասատրյանն աշխատանքի է տեղափոխվել Հայաստանի կոմկուսի Կենտկոմ և նշանակվել Կենտկոմի պրոպագանդայի բաժնի վարիչ: 1989-ի հունվարին Հայաստանի կոմկուսի հումանիտար պրոֆիլի բոլոր 4 բաժինների միավորման կապակցությամբ Գ.Ասատրյանը նշանակվել է Կենտկոմի նորաստեղծ միացյալ ստորաբաժանման՝ գաղափարախոսական բաժնի վարիչ:

1989թ. մայիսին Գ. Ասատրյանն ընտրվել է ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար՝ աշխատելով մինչև 1990թ. օգոստոսը:

Հետխորհրդային շրջանում Գ.Ասատրյանն աշխատել է ոչ պետական կազմակերպություններում, վարել տարբեր պաշտոններ (այդ թվում՝ Հայաստանի շախմատի Ֆեդերացիայի առաջին փոխպրեզիդենտ և գործադիր տնօրեն): 1996-ից նա աշխատել է Հայկական բաց համալսարանում՝ սկզբում որպես մենեջմենթի ֆակուլտետի դեկան, ապա՝ պրոռեկտոր, առաջին պրոռեկտոր՝ միաժամանակ որպես փիլիսոփայության ամբիոնի վարիչ և դասախոս: 2001-ին Գ.Ասատրյանը տեղափոխվել է Երևանի Հյուսիսային համալսարան, որտեղ աշխատել է որպես պրոռեկտոր, ապա՝ համալսարանի նորաստեղծ գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնի ղեկավար:

Գ. Ասատրյանը 2002-ից Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահն էր, նաև՝ Ակադեմիայում իրականացվող գիտական հետազոտությունների առաջատարը: Հումանիզմի հիմնահարցի տարբեր տեսանկյունների վերաբերյալ նրա մի քանի տասնյակ հոդվածներն ու զեկուցումները տպագրվել են Հայաստանի, Ռուսաստանի, Ավստրիայի և Գերմանիայի մի շարք հեղինակավոր գիտական պարբերականներում ու միջազգային գիտաժողովների նյութերի ժողովածուներում: Գ. Ասատրյանը մենագրությունների հեղինակ է: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության կողմից 2014 թվականին լույս ընծայված նրա «Հումանիզմը նոր հազարամյակի հիմնախնդիրների համատեքստում» ստվարածավալ ու հիմնարար աշխատությունը արծարծվող հարցերի արդիականությամբ, մասշտաբայնությամբ ու վերլուծությունների խորությամբ աննախադեպ լինելով հայ իրականության մեջ, կարևոր ներդրում է արդի հումանիզմի ամբողջական հետազոտության ասպարեզում, ուշագրավ ու արժեքավոր ուսումնասիրություն՝ միջազգային չափանիշներով:

Գ. Ասատրյանն աֆղանական պատերազմի մասնակից է (1980-1981 թթ.), Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետության պրեզիդենտի հրամանագրով պարգևատրվել է «Երախտապարտ աֆղանական ժողովրդից» շքանշանով, Աֆղանստանի կառավարական այլ պարգևներով: 1988թ. դեկտեմբերին նա Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով պարգևատրվել է «Աֆղանստանի Հանրապետությունում ինտերնացիոնալ պարտքը կատարելիս ցուցաբերած արիության և ռազմական սխրագործության համար» պատվոգրով:

Գ. Ասատրյանը պարգևատրվել է «Պատվո նշան» երկու շքանշաններով, Խորհրդային Միության մի շարք մեդալներով, Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրերով, կառավարական այլ պարգևներով: Նա պարգևատրվել է Խորհրդային Միության «Գիտելիք» ընկերության՝ ակադեմիկոս Ս.Ի.Վավիլովի անվան ոսկե մեդալով, այլ պարգևներով:

2015 թ. մայիսին, ֆաշիզմի դեմ խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի հոբելյանի կապակցությամբ նա պարգևատրվել է Ռուսաստանի Դաշնության կոմկուսի Կենտկոմի «Մեծ հաղթանակի 70 տարին» հուշամեդալով:

2015թ. սեպտեմբերին, ՀՀ Անկախության տոնի առթիվ, երկարամյա պետական-հասարակական գործունեության համար Գ.Ասատրյանը պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով:

Գ. Ասատրյանը մի շարք անգամներ ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի, Խորհրդային Հայաստանի 10-րդ և 11-րդ գումարումների Գերագույն խորհրդի դեպուտատ, 1989-1990թթ. եղել է Գերագույն խորհրդի մանդատային հանձնաժողովի նախագահը:

Գ. Ասատրյանը բազմիցս ընտրվել է Հայաստանի կոմկուսի Երևանի քաղաքային կոմիտեի կազմում, Հայաստանի կոմկուսի 27-րդ համագումարում ընտրվել է Կենտկոմի անդամության թեկնածու, 28-րդ համագումարում՝ Կենտկոմի անդամ: 1989-1990թթ. նա եղել է ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամ: 1990-ին նա որպես պատգամավոր մասնակցել է Խորհրդային Միության կոմկուսի 28-րդ համագումարին, ընտրվել համագումարի ղեկավար մարմինների կազմում:

Իր հայրենանվեր աշխատանքով ու ազգանպաստ գործերով Գ.Ասատրյանը մեծ ներդրում ունեցավ ժամանակակից Հայաստանի պատմության մեջ: Նա ոչ միայն մի ամբողջ դարաշրջանի լավագույն ավանդույթների կրողն էր, հանրագիտարանային գիտելիքների տեր մտավորական, այլև ապագայի մարդ ու գիտնական, քանի որ փիլիսոփայական իմաստնությամբ միշտ առաջ էր նայում՝ երբեք չբավարարվելով ձեռք բերածով...

Մեծ հումանիստի ու գիտնականի, պետական ազնիվ ու հայրենասեր գործչի, տաղանդավոր կազմակերպչի և պայծառ մարդու հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ,
Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի
նախագահություն,
Հյուսիսային համալսարան

Հայաստանում առաջին հայալեզու ուսումնական ձեռնարկը բրենդինգի ոլորտում

Հայաստանում գիտության և կրթության ոլորտի զարգացումն առաջնային խնդիրներից է, ինչը հնարավոր է իրականացնել մի շարք գործընթացներով, որոնցից կարևորագույնը թերևս հայալեզու մասնագիտական գրականության ստեղծումն է: Նպատակ ունենալով կրթությունը դարձնել մրցունակ համաշխարհային ասպարեզում՝ պետք է ստեղծել մրցունակ գրականություն մայրենի լեզվով և տեղական առանձնահատկությունների վերլուծությամբ, որը տարբեր ոլորտների մասնագետների առաջնային գործառույթը պետք է լինի:

Լինելով ոլորտի փորձագետ, մասնագետ, ով «Բրենդինգի հիմունքներ» առարկայական ծրագրի հեղինակն է և ակադեմիական ոլորտում առաջին դասավանդողը, Լիլիթ Շաքարյանը ներկայացրեց իր հեղինակային գիրքը բրենդինգի ոլորտում: Գիրքը կհամալրի հայալեզու մասնագիտական գրականության փոքրաքանակ ցանկը, որի կարիքը բավականին մեծ է: Այն մայրենի լեզվով գիտություն ուսումնասիրելու բացառիկ հնարավորություններից է: Ձեռնարկը կոչված է նախևառաջ հաղթահարելու լեզվի խոչընդոտը կրթական ոլորտում, որի հաղթահարումը կնպաստի կրթության որակի բարձրացմանը, ապա վերլուծելու հայաստանյան իրականության առանձնահատկությունները, ինչն էլ կբերի հայաստանյան համատեքստում բրենդ հայեցակարգի կիրառության առավելությունների հասկացմանն ու զարգացման արդյունավետ բրենդ-ռազմավարության ընտրությանը: Գիրքը նախատեսված է սոցիոլոգիայի, տնտեսագիտության, ժուռնալիստիկայի, մարքեթինգի, PR տեխնոլոգիաների բնագավառի մասնագետների ու նշված կամ հարակից բնագավառներում առարկաներ դասավանդող դասախոսների համար:

Գրքի հեղինակ Լիլիթ Շաքարյանը 2009 թ.-ից ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի, սոցիալական աշխատանք և սոցիալական տեխնոլոգիաներ ամբիոնի դասախոս է: Նա Բրենդինգի հիմունքներ, ՁԼՄ սոցիոլոգիա, ժամանակակից PR տեխնոլոգիաներ դասընթացների առաջին նախաձեռնողը, մշակողն ու դասավանդողն է: Բազմաթիվ գիտական հոդվածների հեղինակ է: Լիլիթ Շաքարյանը հաճախ է հանդես գալիս դասախոսություններով նաև եվրոպական երկրների հեղինակավոր համալսարաններում:

Ինչպես նշում են համալսարանականները, Լիլիթ Շաքարյանն իր պապիկի՝ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Շաքարյանի արժանի հետնորդն ու հետևորդն է գիտության ոլորտում:

Հարություն ՀՈՎՆԱԹԱՆ

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ.

ՄԵՐՕՐՅԱ ԱՆՎԱՆԻ ԱՐԵՎԵԼԱԳԵՏ-ՍԵՊԱԳՐԱԳԵՏԸ

(Ծննդյան 65 և գիտամանկավարժական գործունեության 40-ամյակների առթիվ)

Լրացավ ՀՀ ԳԱԱ «Հիմնարար հայագիտություն» էլեկտրոնային ամսագրի գլխավոր խմբագիր, Արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի վարիչ, պ. գ. դ., պրոֆ. Արամ Քոսյանի ծննդյան 65 և գիտամանկավարժական գործունեության 40-ամյա հոբելյանները: Չլինելով արևելագետ, առավել ևս՝ սեպագրագետ, սակայն երկար տարիներ կյանքում քայլելով կողք կողքի, մեր ընկերությունն ու մտերմությունը (սկսած 1978 թվականից) ինձ պարտադրում են խոսք ասել նրա հոբելյանների կապակցությամբ:

Մերօրյա ճանաչված արևելագետ-սեպագրագետը ծնվել է 1956 թ. մայիսի 18-ին Երևանում, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի երկարամյա փոխտնօրեն, անվանի լեզվաբան ու մանկավարժ Վաղարշակ Քոսյանի ավանդապաշտ ընտանիքում: 1977 թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետի պատմության և հասարակագիտության բաժինը: 1977–1978 թթ. աշխատել է Աբովյանի շրջանի Ձորաղբյուր գյուղի միջնակարգ դպրոցում: 1978 թ. աշխատանքի է անցել Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնում: 1981–1982 թթ. որպես փորձնակ–հետազոտող ուսանել է Մոսկվայում՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի սլավոնագիտության և բալկանագիտության ինստիտուտում (գիտական ղեկավար՝ բ. գ. դ., պրոֆ. Վյաչեսլավ Իվանով): Վերադառնալով՝ Արևելագիտության ինստիտուտի սեպագիր քաղաքակրթությունների բաժնում Ա. Քոսյանը ստանձնում է Հայաստանում խեթագիտության զարգացման և այդ ուղղությամբ նոր մասնագետների պատրաստման կարևոր գործը: Այդ մասին վերջերս հիշատակեց ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն Արսեն Բոբոխյանը. « … միասին (նկատի ունի վաղամեռիկ Արտակ Մովսիսյանին - Ա. Ձ.) խեթերեն էինք սովորում արևելագետ Արամ Քոսյանի ուսուցչությամբ» (տե՛ս ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2020, - 3, էջ 324–325):

1994–1995 թթ. Ա. Քոսյանը «W. Fulbright Foundation» դրամաշնորհի շրջանակներում հետազոտություններ է անցկացրել Քլիվլենդի պետական համալսարանում (ԱՄՆ), իսկ 2000–2002 թթ.՝ «Alexander von Humboldt Stiftung»-ի ծրագրով Գերմանիայի Վյուրցբուրգի համալսարանի Արևելյան բանասիրության ինստիտուտում:

Ա. Քոսյանը գիտակազմակերպական աշխատանքի ուրույն և պատասխանատու դպրոց է անցել. 1995–2001 թթ. աշխատել է Արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն, 2002–2007 թթ.՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության և հետբուհական կրթության վարչության պետ, այնուհետև՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Գիտական կենտրոնի տնօրեն: 2011 թվականից գլխավորում է Արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի աշխատանքները:

1987 թ. Ա. Քոսյանը «Մ. թ. ա. XII–VIII դդ. Փոքր Ասիայի և հարակից շրջանների լուվիական պետությունները» թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1997 թ. «Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և հայկական լեռնաշխարհը» թեմայով էլ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2012 թ. արժանացել է պրոֆեսորի կոչման:

Ընդունված է ասել, որ պրոֆ. Ա. Քոսյանի անվան հետ է կապված Հայաստանում արևելագիտության կարևորագույն ուղղություններից մեկի՝ սեպագրագիտության զարգացումը: Բազմաբեղուն գրչի տեր գիտնականի ուսումնասիրություններն աչքի են ընկնում Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորներին վերաբերող սեպագիր աղբյուրների համակողմանի վերլուծությամբ, նորահայտ սկզբնաղբյուրների օգտագործմամբ, Հայկական լեռնաշխարհի երկրների հետ Խեթական տերության հարաբերությունների նորովի մեկնաբանություններով: Հատկապես կարևոր են նրա «Մ. թ. ա. XII–VIII դարերի Փոքր Ասիայի Լուվիական թագավորությունները» (1994, ռուսերեն), «Տուն Թորգոմայ» (1997), «Խեթական տերությունը և Ախխիյավան (Տրոյական պատերազմը)» (1998), «Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը» (1999), «Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների)» (2004), «Մ. թ. ա. XIV դարի խեթա-հայասական միջպետական պայմանագրերը» (2016), «Մ. թ. ա. XV դարի խեթական սեպագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին» (2018) և այլ մենագրությունները:

Ա. Քոսյանի ղեկավարությամբ պաշտպանվել են թեկնածուական ուսումնասիրություններ, նա բազմիցս եղել է դոկտորական ատենախոսությունների ընդդիմախոս: 1993 թ. եղել է Արևելագիտության ինստիտուտին կից գործող «Համաշխարհային պատմություն և աղբյուրագիտություն» մասնագիտական խորհրդի անդամ, իսկ 2021 թ. հունվարից նույն ինստիտուտին կից գործող «Համաշխարհային պատմության աղբյուրագիտություն և պատմագրություն» մասնագիտական խորհրդի նախագահն է:

Անվանի գիտնականը մասնակցել և զեկուցումներով հանդես է եկել միջազգային և հանրապետական բազմաթիվ գիտաժողովների: Ա. Քոսյանի համահեղինակությամբ հրատարակվել են բուհական և դպրոցական շուրջ երկու տասնյակ դասագրքեր ու ձեռնարկներ: Նա գիտական մի շարք ժողովածուների խմբագրական խորհրդի անդամ կամ գլխավոր խմբագիր է («Արամազդ», «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», «Հին Արևելք», «Հիմնարար հայագիտություն» և այլն): Երկար տարիներ դասախոսական աշխատանք է կատարել Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում, Երևանի պետական համալսարանում, ՀՀ ԳԱԱ գիտակրթական կենտրոնի մագիստրատուրայում:

Գիտական ու ընկերական միջավայրում հարգված, համեստագույն ընկերոջս՝ Արամ Քոսյանին, մաղթում եմ քաջառողջություն, երջանկություն՝ իր բազմանդամ ընտանիքի հոգատար գրկում և մասնագիտական նորանոր ձեռքբերումներ:

Անուշավան ՁԱՔԱՐՅԱՆ
«Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր

Վարպետ Գրիշան 80 տարեկան է

Օրերս լրացավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ավտոմատ հեռախոսակայանի կապի բաժնի պետ Գրիշա Պողոսյանի ծննդյան 80 տարին:

Ակադեմիայի համակարգի հնագույն աշխատակիցները ջերմությամբ և սիրով են նշում այս տարելիցը, որովհետև տասնամյակներ շարունակ այդ համեստ, բարեհամբույր, պատրաստակամ և իր գործի հիանալի գիտակ Գրիշա Պողոսյանը նրանց համար եղել է մտերիմ, հոգատար և սրտակից ընկեր՝ մեր Գրիշան:

Գրիշա Պողոսյանը Գիտությունների ակադեմիայում սկսել է աշխատել ավելի քան 50 տարի առաջ: Նա և իր եղբայրներն այն տարիներին մոնտաժել և գործի են գցել ավտոմատ հեռախոսակայանը, որը տասնամյակներ շարունակ անխափան ծառայեց ակադեմիայի համակարգի աշխատողներին: Աշխատանքին զուգընթաց Գրիշա Պողոսյանը սովորեց և ավարտեց Երևանի պետական համալսարանի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի բաժինը՝ տեխնիկից աճելով մինչև ինժեներ և ապա կապի բաժնի պետ:

Ահա արդեն 62 տարի ակադեմիայի բակում, մասնաշենքերում կոլեկտիվի անդամները օրվա տարբեր ժամերի տեսնում են վարպետ Գրիշային աշխատանքային կապույտ արտահագուստով, ինչ-որ գործիքներ ձեռքին, բարյացակամ, անբաժան ժպիտը դեմքին, հարկից հարկ, աշխատասենյակից աշխատասենյակ շրջելիս խափանված կապը վերականգնելու առաքելությամբ:

Գրիշա Պողոսյանի թերևս ամենագովելի հատկանիշն իր օգնությանը դիմողներին անմիջապես արձագանքելն է, ըստ որում զարմանալի պատրաստակամությամբ և սիրով:

Նրա ղեկավարած կապի բաժինը սպասարկում է վիթխարի մի տարածք հարյուրավոր հեռախոսներով, շենքից շենք, հարկից հարկ, սենյակից սենյակ անցնող լարերով, որոնցից յուրաքանչյուրի նշանակությունը և ֆունկցիան ինքը գիտի, հիշում է ամենայն ճշգրտությամբ: Եվ չգրված օրենք է. ոչ մի հեռախոս երկար չի լռում ակադեմիայում, երբ այդ անսարքությունից տեղյակ է վարպետ Գրիշան:

Այսօր ակադեմիայի համակարգի բոլոր աշխատակիցների անունից սրտանց շնորհավորենք մեր սիրելի վարպետ Գրիշային նրա 80-ամյա հոբելյանի առթիվ, մաղթենք նրան քաջառողջություն, երկար տարիների կյանք և անսպառ եռանդ, որպեսզի նա դեռ երկար ծառայի ակադեմիայի կոլեկտիվին, և մենք դեռ երկար վայելենք նրա բարի ներկայությունը:

Ա. ՔԱՋԲԵՐՈՒՆԻ

«Մարդ-գլուխգործոց». թուրք պրոֆեսորի անդրադարձը մեծ լեզվաբան Հակոբ Մարթայանին

Թուրքիայի պատմության մեջ իր անունը ոսկե տառերով է գրել հայազգի լեզվաբան Հակոբ Մարթայանը, այն մարդը, որը ժամանակակից թուրքական այբուբենի հեղինակն է, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալի «Աթաթուրք» մեկանվան հեղինակը: Վերջինս էլ իր հերթին Մարթայանին անվանել էր Դիլաչար (Dilacar)՝ լեզու բացող, լեզվի բանալի: Վերջերս թուրք պրոֆեսոր, քաղաքագետ Աքալընը Ջունեյթը թուրքական «Aydnlk» պարբերականում անդրադարձել էր Հակոբ Մարթայանին՝ «Հակոբ Դիլաչար. մարդ-գլուխգործոց» խորագրով հոդվածով: Հոդվածը մասնակի թարգմանությամբ ներկայացրել է Ermenihaber.am թուրքագիտական կայքը: «Թուրք հեղինակը գրում է, որ Հակոբ Մարթայանը եղել է Թուրքական լեզվագիտական ընկերության առաջին քարտուղարը, հայերենից և թուրքերենից բացի տիրապետել է անգլերեն, հունարեն, իսպաներեն, լատիներեն, գերմաներեն, ռուսերեն և բուլղարերեն լեզուներին: 1934թ., երբ Թուրքիայում ընդունվում էր ազգանվան մասին օրենքը, Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Աթաթուրքի առաջարկով Հակոբ Մարթայանը ստանում է «Դիլաչար» ազգանունը և հետագայում իր աշխատությունները ստորագրում որպես «A. Dilacar»,- գրում է Ermenihaber.am-ը՝ հղում անելով «Aydnlk»-ին: Իր հոդվածում թուրք պրոֆեսորը ափսոսանք է

հայտնում, որ թուրքերը մոռացության են մատնել իրենց այդքան մեծ ծառայություն մատուցած մարդուն. «Ափսոս որ բավականաչափ չենք ճանաչում թուրքերենի մանրանկարիչներից Հակոբ Դիլաչարին, որ նվեր է թուրքական մշակույթին: Օրինակ՝ նա է առաջինը, որ Մուստաֆա Քեմալին առաջարկել է ընդունել «Աթաթուրք» ազգանունը»: Աքալընը մանրամասն պատմում է Աթաթուրքի ու Մարթայանի առաջին՝ Դամասկոսում տեղի ունեցած հանդիպման մասին՝ ընդգծելով միաժամանակ, որ Դիլաչարն Առաջին աշխարհամարտի ժամանակ մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է: Նա նշում է նաև, որ Մարթայանը գերմանացի սպաներին թուրքերեն է սովորեցրել: «Աքալընը հայտնում է, որ Հակոբին տխրեցնում է այն փաստը, երբ Մուստաֆա Քեմալի մոտ իրեն որպես «լրտես» են ներկայացնում: Իսկ իրեն մեղադրելու պատճառը լինում է այն, որ Հալեպում մի բանտարկյալ անգլիացի սպայի հետ անգլերենով է շփված լինում: Մարթայանին Մուստաֆա Քեմալը հարցնում է, թե ինչու չի փախել մյուս սպաների նման, նա պատասխանել է. «Եթե ես չփախա կովկասյան ճակատից, ուրեմն Դամասկոսի փողոցներից էլ չէի փախչի»: Մարթայանի մոտ մի գիրք է եղել, որը հետաքրքրել է Քեմալին, ինչն առիթ է հանդիսացել երկուսի միջև երկարատև զրույցի: «Թուրքերենի մասին Հակոբի դիտարկումները և այդ գիրքը մեծ ազդեցություն են թողնում Քեմալի վրա: Նա առաջին անգամ է տեսնում լատինատառ թուրքերենով գիր»: Հեղինակը նշում է, որ Աթաթուրքը և Մարթայանը երկրորդ անգամ հանդիպում են 1932թ. Թուրքական լեզվագիտական համագումարի ընթացքում, որն էլ դառնում է իրենց բարեկամության սկիզբը: «Մարթայանն այնքան խորն էր տիրապետում թուրքերենին, որ մեզնից շատերը չեն կարող ընկալել»,- եզրակացրել է թուրք պրոֆեսորը: Ի դեպ, պրոֆեսորը մեծ բացթողում է համարում այն փաստը, որ մինչև օրս Ստամբուլում կամ Անկարայում չի տեղադրվել Հակոբ Դիլաչարի արձանը՝ հաշվի առնելով նրա ունեցած ծանրակշիռ դերը և ներդրումը Թուրքիայի մշակութային կյանքում: Ի դեպ, Հակոբ Մարթայանի վերաբերյալ կա հետաքրքրական մի պատմություն: Հայտնի է, որ Մուստաֆա Քեմալը սիրում էր գիշերային կերուխումն ու կիսամերկ երգչուհիներին: Նման մի երեկոյի Քեմալը Հակոբ Մարթայանին առաջարկում է հայկական մի երգ երգել: Եվ հայ լեզվաբանը հանդիսավոր երգում է Անդրանիկին նվիրված «Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու ժայռ» հայտնի երգը: Քեմալի դեմքը մռայլվում է, սակայն ոչինչ չի ասում: Թուրքերը հարգում են իրենց հաղթողներին…

Էրդողանը հրահանգել է թուրք-ադրբեջանական ֆիլմ նկարահանել Արցախյան վերջին պատերազմի մասին

Ավելի վաղ լրատվամիջոցները հաղորդել էին, որ սույն թվականի մարտի 2-ին Թուրքիայի նախագահի աշխատակազմի հանրային կապերի վարչության ղեկավար Ֆահրեթթին Ալթունն Անկարայում հյուրընկալել է Ադրբեջանի մշակույթի նախարար Անար Քերիմովին: Մամուլի այդ ժամանակվա հաղորդագրությունների համաձայն՝ հանդիպման ժամանակ քննարկվել էին երկկողմ մշակութային մի շարք ծրագրեր, բայց բոլորովին վերջերս հայտնի դարձավ, որ հանդիպման մեխը եղել է թուրք-ադրբեջանական ֆիլմի ստեղծումը, որը պատմելու է Արցախյան վերջին պատերազմում թուրք-ադրբեջանական տանդեմի տարած հաղթանակի մասին: Ավելին՝ խոսքը ոչ թե մեկ, այլ բազմաթիվ ֆիլմերի և նույնիսկ սերիալների մասին է, որոնք բոլորը պատմելու են պատերազմի մասին: Այս նախաձեռնության հեղինակն էրդողանն է, որն արդեն ստորագրել է այդ հրամանագիրը: Ավելի վաղ Թուրքիայի նախագահը հրահանգել էր «պատշաճ գրքեր» հրատարակել «թյուրքական մեծ հաղթանակի» մասին: Ըստ որոշ աղբյուրների պնդման՝ այս պահին «պատերազմի փառաբանում-լուսաբանման» վրա են աշխատում բազմաթիվ հետազոտողներ, այդ թվում՝ պալատական գրողներ: Վերջիններիս անելիքը արձակ և չափածո գործեր գրելն է: Ըստ Քերիմովի և Ալթունի՝ այս նախաձեռնությունը լինելու է «երկու եղբայրների սերտ բարեկամության ամրապնդողը»:

Վերաբացվել է Աստղացուցարանը

ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանում կրկին վերաբացվել է «Երկնակամար» աստղացուցարանը (պլանետարիում): Այս մասին հայտնել են աստղադիտարանից:

Պլանետարիումը գմբեթաձև պրոյեկցիոն էկրան է: Այստեղ այցելուները կկարողանան դիտել աստղագիտության, բնագիտության և կենդանաբանության մասին ինչպես գիտակրթական, այնպես էլ ժամանցային բնույթի անիմացիոն եւ մուլտիպլիկացիոն տեսաֆիլմեր:

Ֆիլմերը նախատեսված են տարբեր տարիքային խմբերի համար (3-7 տարեկան՝ նախակրթական, 7-11 տարեկան, 11-15 տարեկան): Յուրաքանչյուր ֆիլմի տևողությունը կազմում է 25-30 րոպե: Պլանետարիումը հասանելի է շաբաթ և կիրակի օրերին՝ ժամը 10:00-23:00:



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի կողմից ս. թ. փետրվարի 25-ին հայտարարված հայագիտական ուսումնասիրությունների նախագծերի մրցույթը համարվում է չեղյալ, հիմնադրամի ֆինանսավորումը էականորեն կրճատվելու պատճառով:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել՝ ք. Երևան, Բաղրամյան 24, 40 սենյակ, հեռախոս՝ 010 52 13 62

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՒՂՂՈՒՄ

Ս. թ. «Գիտություն» թերթի մարտյան համարում տպագրված «Լև Գումիլյովի հանրագիտարանը և հայերը» հոդվածում տեղ է գտել տեխնիկական վրիպակ:

Հոդվածի 2-րդ սյունակի նախավերջին պարբերության վերջից 4-րդ տողում՝ «մեր թվագրության 987 թվականը» տողում պետք է լիներ «387 թվականը»:

Հայցում ենք ընթերցողի ներողամտությունը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ,
հեռ. 56-80-14, 077 31 63 76
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 20.05.2021 թ.:
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА